Արձանագրություն N 4

ՀՀ ՖՆ կարիքների համար ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/8 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Վ. Պողոսյան - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության պետ.

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Մարտիրոսյան - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի պետի պարտականությունները կատարող.

Հ. Ղազարյան - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ.

Գնումները համակարգող

Գ.Սիմոնյան՝ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի մասնագետ

1. **Տեղեկություններ մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից ներկայացված հիմնավորումների վերաբերյալ**

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին չի ներկայացվել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

2. **<u>Տեղեկություններ հայտերի բացման մասին</u>**

Հայտերի բացումը տեղի է ունեցել www.eauction.armeps.am կայքի միջոցով՝ հակադարձ աճուրդի օրը՝ 08.12.2025թ.-ին ժամը 14:30-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/8» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Քրիստափորի 2/2,
Էյչ Գրուպ ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
«Պրոսելս» ՍՊԸ	ք. Երևան, Դավթաշեն 1-ին թաղ. 53/1շ. 14բն.,

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/8» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկված գներն են՝

Հ/Հ	ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները					
			Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
			Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ (%)	Ընդհանուր գին (ՀՀ դրամ)	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ (%)	Ընդհանուր գին (ՀՀ դրամ)
1	«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ	թուղթ, A4 ֆորմատի /նախահաշվային գինը՝ 3060000 ՀՀ դրամ /	2382000	20	2858400	1960000	20	2352000
1	Էյչ Գրուպ ՍՊԸ	թուղթ, A4 ֆորմատի /նախահաշվային գինը՝ 3060000ՀՀ դրամ /	2535000	20	3042000	2016000	20	2419200
1	«Պրոսելս» ՍՊԸ	թուղթ, A4 ֆորմատի /նախահաշվային գինը՝ 3060000 ՀՀ դրամ /	2700000	20	3240000	2700000	20	3240000

5. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

կասեցնել նիստը և հայտերի գնահատումն իրականացնել 1 աշխատանքային օրվա ընթացքում,

- նիստը վերսկսել 09.12.2025թ. ժամը 09:30-ին:

09.12.2025թ. ժամը 09:30-ին գնահատող հանձնաժողովը, որին աշխատանքներին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի բոլոր անդամները՝ շարունակեց կասեցված նիստի աշխատանքները:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

-քննարկվում է միայն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ -ի,ներկայացված հայտը, հաշվի առնելով, մյուս մասնակիցների հայտերը համակարգի կողմից մերժվում են.

- «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտում առկա է հետևյալ անհամապատասխանությունը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված նկարագրին:

Հանձնաժողովը որոշեց.

- հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, հնարավորություն տալով մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը /10.12.2025թ. ներառյալ/ շտկել արձանագրված անհամապատասխանությունը,

- նիստը վերսկսել 11.12.2025թ. ժամը 11:30-ին:

11.12.2025թ. ժամը 11:30-ին գնահատող հանձնաժողովը, որին աշխատանքներին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի բոլոր անդամները՝ շարունակեց կասեցված նիստի աշխատանքները:

Հանձնաժողովն արձանագրեց, որ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը և որոշեց ընթացակարգի հաղթող (ընտրված)

մասնակից ճանաչել «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին, որի հետ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի Նախագահ _____ **Վ.Պողոսյան**

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝

_____ **Ա. Մարտիրոսյան**

_____ **Հ. Ղազարյան**

Գնումները համակարգող՝ _____ **Գ.Սիմոնյան**